ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2023թ. հունվարի երրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Հունվարի 31-ին շրջանների զգալի մասում դիտվել է թույլ անձրև: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ստեփանակերտում՝ 0.4մմ Ասկերանում՝ 2մմ, Մարտունիում՝ 1մմ, Մարտակերտում՝ 2մմ: Հանրապետության տարածքում 2 օր դիտվել է մառախուղ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է + 0.7^{0}C, նորմայից բարձր 1.4^{0}C-ով, Ասկերանում՝ +1.7^{0}C, Մարտունիում՝ +2.4^{0}C նորմայից բարձր 1.1^{0}C-ով և Մարտակերտում՝ +3.7^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 30-ին՝ +8...+12^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 27-28-ին՝ -4... -7^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -3....-6^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև՝ +12...+16^{0}C:

Հունվարի երրորդ տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 2-3 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 7-9 մ/վրկ արագությամբ:

Օդի միջին տասնօրյակային հարաբերական խոնավությունը կազմել է 72-78%:

ԱՀ-ում 2023թ. հունվար ամսում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Հունվար ամսում հանրապետության տարածքում դիտվել է քիչ տեղումներով եղանակ, ամսվա օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում, Մարտակերտում նորմայից բարձր 2^{0}C-ով:

Տեղումների ամսվա գումարային քանակը կազմել է Ստեփանակերտում՝ 10մմ, նորմայի 56%, Ասկերանում՝ 12մմ, նորմայի 57%, Մարտունիում՝ 14 մմ, նորմայի 45%, Մարտակերտում՝ 12մմ, նորմայի 92%, կամ Ստեփանակերտում 59%, Ասկերանում 92%, Մարտունիում 108% և Մարտակերտում 170%, քան 2022 թ-ին:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը կազմել է Ստեփանակերտում՝+1.2^{0}C, որը բարձր է նորմայից 0.8^{0}C-ով, Ասկերանում՝ +1.6^{0}C, նորմայից բարձր՝ 0.1^{0}C-ով, Մարտունիում՝ +2.2^{0}C, նորմայից բարձր՝ 0.8^{0}C-ով, Մարտակերտում՝ +3.8^{0}C, նորմայից բարձր՝ 2.0^{0}C-ով, կամ 1.4 – 3.0^{0}C–ով ցածր քան 2022թ-ին:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը հանրապետության տարածքում դիտվել է հունվարի 3, 4, 7 -ին՝ +14... +17^{0}C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 13, 27-28 -ին՝ -4... -7 ^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -3... -6^{0}C, առավելագույնը բարձրացել է մինչև՝ +13....+22^{0}C:

Հունվար ամսվա քամու միջին արագությունը կազմել է 2-3 մ/վրկ, առանձին օրեր դիտվել է քամու ուժգնացում պոռթկումները մինչև՝ 8-13 մ/վրկ արագությամբ:

Ստեփանակերտում՝ հունվարի 8-14-ին, ձյան ծածկի բարձրությունը առավոտյան 07 ժամի դրությամբ կազմել է 2-6սմ, Ասկերանում՝ հունվարի 9-13-ը 1-3սմ, Մարտունիում՝ հունվարի 8-13-ը 1-9սմ, Մարտակերտում 9-ին, 11-13-ին՝ 1-3 սմ:

Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտունիում հունվար ամսում օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է 69-76%, նորման Ստեփանակերտում՝ 70%: